
**ՄԵՎԾՈՎՅԱՆ ՆԵՂՈՒՑՆԵՐԻ
ԽՆԴԻՐԸ ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԿՋԲՈՒՄ**

ԳԱՍՊԱՐՅԱՆ Ա. Ս.

Հաշվի առնելով սնծովյան նեղուցների վերաբերյալ Պոտսդամի կոնֆերանսում քննարկումների արդյունքները և Երկրորդ աշխարհամարտի ընթացքում Թուրքիայի կողմից Մոնտրյոյի համաձայնագրի խախտման բազմաթիվ դեպքերը, 1946 թ. օգոստոսի 7-ին և սեպտեմբերի 24-ին խորհրդային կողմը նեղուցների ռեժիմի վերաբերյալ երկու հայտագիր հղեց թուրքական կողմին: Իր հերթին, թուրքական կառավարությունը օգոստոսի 22-ին և հոկտեմբերի 18-ին հանդես եկավ խորհրդային հայտագրերի պատասխանով¹:

Անդրադառնալով խորհրդա-գերմանական պատերազմի տարիներին Թուրքիայի կողմից 1936 թ. Մոնտրյոյի համաձայնագրի խախտման բազմաթիվ փաստերին ու խորհրդային կողմի ժամանակին հղված բողոքի հայտագրերին, 1946 թ. օգոստոսի 7-ի խորհրդային հայտագրում մասնավորապես ասվում էր. «Բերված փաստերից երևում է, որ Գերմանիայի ու նրա դաշնակիցների դեմ մղված՝ անցած պատերազմի ընթացքում նեղուցների վերաբերյալ համաձայնագիրը թշնամական պետություններին չխանգարեց նեղուցներն օգտագործելու ռազմական նպատակներով՝ ընդդեմ Խորհրդային Միության և դաշնակից այլ պետությունների. ըստ որում, թուրքական կառավարությունը չի կարող պատասխանատվություն չկրել նման վիճակի համար»²: Թուրքիային հիշեցնելով 1945 թ. հուլիս-օգոստոսին Պոտսդամում երեք մեծ տերությունների (Մեծ Բրիտանիա, ԱՄՆ և ԽՍՀՄ) սկզբունքային համաձայնությունը, որ Մոնտրյոյի համաձայնագրով սահմանված նեղուցների ռեժիմն այլևս չի համապատասխանում նոր պայմաններին և առաջարկվում էր մշակել նեղուցների նոր ռեժիմ, ինչպես նաև երեք տերությունների՝ նեղուցների վերաբերյալ Պոտսդամի որոշումը հակիրճ մեջբերելով, խորհրդային կողմը 1946 թ. օգոստոսի 7-ի իր առաջին հայտագրում Թուրքիային հաղորդում էր, որ լիովին տեղյակ է նաև 1945 թ. նոյեմբերի 21-ին Թուրքիային Մեծ Բրիտանիայի հղած հայտագրի բովանդակությանը³: Խորհրդային կողմը դրանով կարծես ակնարկում էր, որ բրիտանական կողմի հայտագիրը համաձայնեցված է եղել խորհրդային կառավարության հետ: Սակայն 1946 թ. օգոստոսի 7-ի խորհրդային առաջին հայտագրում առաջարկվում էր հաստատել նեղուցների նոր կանոնակարգ, որը պետք է հիմնված լիներ հետևյալ հինգ սկզբունքների վրա.

¹ Հիշյալ չորս փաստաթղթերն ամբողջությամբ տե՛ս *Feridun Cemal Erkin, Türk-Sovyet İlişkileri ve Boğazlar, Ankara, 1968, s. 414-440.*

² Մեջբերումը տե՛ս **Սահակյան, Ռ. Գ.**, Սովետա-թուրքական հարաբերությունների պատմության հակագիտական լուսաբանումը ժամանակակից թուրք պատմագրության մեջ, Ե., 1964, էջ 112-113:

³ **Feridun Cemal Erkin**, նշվ. աշխ 415:

1. «Նեղուցները միշտ պետք է բաց լինեն բոլոր երկրների առևտրական նավերի համար.

2. Նեղուցները միշտ պետք է բաց լինեն սևծովյան պետությունների ռազմանավերի համար.

3. Ոչ սևծովյան պետությունների ռազմանավերի անցումը նեղուցներով, բացառությամբ հատուկ նախատեսված դեպքերի, պետք է արգելվի.

4. Նեղուցների կանոնակարգի սահմանումը պետք է մտնի Թուրքիայի և սևծովյան մյուս երկրների իրավասության մեջ.

5. Թուրքիան և Խորհրդային Միությունը, որպես նեղուցներում առևտրական նավագնացությունն ու դրանց անվտանգությունն ապահովելու մեջ ամենից ավելի շահագրգռված պետություններ, համատեղ միջոցներով պետք է կազմակերպեն նեղուցների պաշտպանությունը՝ ուրիշ տերությունների կողմից սևծովյան տերություններին թշնամական նպատակներով դրանց օգտագործումը կանխելու համար»⁴: Հայտագրի վերջում խորհրդային կողմը նշում էր, որ վերոհիշյալ փաստաթղթի վերաբերյալ տեղյակ է պահելու նաև ԱՄՆ-ին և Մեծ Բրիտանիային⁵:

Հարկ է նշել, որ խորհրդային առաջին հայտագիրն ինքնին վերջնագրի բնույթ ուներ: Պատահական չէ այն, որ թուրք պատմաբան Թահսին Յունալը խորհրդային կողմի թե առաջին և թե երկրորդ հայտագրերը որակում է իբրև «վերադարձ դեպի ցարիզմի քաղաքականությանը նեղուցների հարցում» և դրանով է բացատրում նույնիսկ այն փաստը, որ Թուրքիան խզեց իր հարաբերությունները Ռուսաստանի հետ՝ թեքվելով «դեպի ժողովրդավարական աշխարհը»⁶: Ալթեմուր Քըլըջին իր հերթին խորհրդային կողմի առաջին հայտագրում արված առաջարկները գնահատում է իբրև Թուրքիայի ինքնիշխանությանն ուղղված իրական սպառնալիք, որը վնասում էր նաև «Թուրքիայի և մերձափնյա ու ոչ մերձափնյա տերությունների միջև ռազմավարական ծայրահեղ անհրաժեշտություն ներկայացնող նրբին հավասարակշռությանը»⁷:

Թուրքական կողմին, թերևս, մտահոգում էր հետևյալ հարցը. արդյո՞ք, Խորհրդային Միության առաջարկը կպաշտպանեն նրա երեկվա դաշնակիցները՝ Միացյալ Նահանգները և Մեծ Բրիտանիան: Դժվար չէր ենթադրել, որ վերջիններս կարող էին մտահոգություններ ունենալ հատկապես նեղուցներում Խորհրդային Միության դիրքերի աննախադեպ ամրապնդման հավանականության հետ կապված, ինչը միանգամայն հնարավոր էր, եթե թուրքական կողմն ընդուներ խորհրդային հայտագրում նշված հինգ սկզբունքները: Ամեն դեպքում փաստ է, որ

⁴ Մեջբերումը տե՛ս **Սահակյան Ռ. Գ.**, նշվ. աշխ., էջ 113 :

⁵ **Feridun Cemal Erkin**, նշվ. աշխ., էջ 415:

⁶ **Tahsin Ünal**, *1700 den 1958 e kadar Türk siyasat tarih. Ankara, 1958, s. 291.*

⁷ **Altamur Kılıç**, *Turkey and the World. Washington, 1959, p. 39*: Թահսին Յունալից եւ Ալթեմուր Քըլըջից արված մեջբերումները տե՛ս **Սահակյան Ռ. Գ.**, նշվ. աշխ., էջ 110-111:

թուրքական կողմը գիտակցում էր խորհրդային հայտագրում առաջ քաշված առաջարկներին պատասխան տալուց առաջ ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կառավարող շրջանակների հետ խորհրդակցելու անհրաժեշտությունը: Բնքին կարևոր է այն, որ Թ. Յունալի վկայությամբ խորհրդային կողմի 1946 թ. օգոստոսի 7-ի հայտագրին⁸ պատասխանելուց առաջ թուրքական կողմն, իրոք, խորհրդակցել է ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կառավարող շրջանակների հետ: Թ. Յունալը մասնավորապես նշում է, որ «Թուրքական կառավարությունն անգլիական և ամերիկյան կառավարությունների հետ խորհրդակցելուց հետո խորհրդային պահանջները մերժեց»⁹:

Խորհրդային առաջին հայտագրին, ինչպես նշվեց, թուրքական կողմը պատասխանեց 1946 թ. օգոստոսի 22-ին: Թուրքական կողմը մանրամասն անդրադառնում էր թե՛ գերմանական «Ձեեֆալկե», թե՛ իտալական «Տավրիզիո» ռազմանավերի՝ նեղուցներով Սև ծով մտնելու փաստերին, ինչպես նաև գերմանական «Էմս» (թվով 8) և «Կրիգստրանսպորտ» (թվով 5) տիպի տարբեր ջրատարողությամբ 13 նավերի՝ Սև ծովից Էգեյան ծով անցնելու փաստին, ինչն արծարծվել էր խորհրդային հայտագրում¹⁰: Թուրքական կողմը, ըստ էության, չէր հերքում բուն անցման փաստը, բայց պարզաբանումներ տալով, ձգտում էր ասպացուցել, որ դա Խորհրդային Միության համար սպառնալիք չի եղել:

Մինչ թուրքական կողմի պատասխանի ստացումը, խորհրդային կողմն իր համար արդեն իսկ պարզաբանել էր սևծովյան նեղուցների հարցում ամերիկյան կողմի դիրքորոշումը: Մասնավորապես 1946 թ. Օգոստոսի 7-ին ԱՄՆ-ի պետքարտուղարի պաշտոնակատարին ուղղված փաստաթղթում խորհրդային կողմը նշում էր, որ լիովին տեղեկացվել է ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կառավարությունների կողմից համապատասխանաբար 1945 թ. նոյեմբերի 2-ին և նոյեմբերի 21-ին նեղուցների խնդրի առնչությամբ թուրքական կառավարությանը հղված հայտագրերին և առաջարկում է հաստատել նեղուցների նոր կանոնակարգ¹¹:

Այդ կանոնակարգի սկզբունքները, աննշան ոճական տարբերությամբ, որը թերևս թարգմանության արդյունք էր, առկա էին Թուրքիային խորհրդային կողմի ուղղած առաջին հայտագրում (որ մեջբերեցինք վերը): Դրան հետևեց ԱՄՆ-ի պետքարտուղարի պաշտոնակատարի՝ 1946 թ. օգոստոսի 19-ի պատասխան ուղերձը ԱՄՆ-ում Խորհրդային Միության գործերի հավատարմատարին, որն ըստ էության, հիշյալ խնդրում ԱՄՆ-ի կառավարության կարծիքներն արտահայտող խմբագրական էր: Այնտեղ ասվում էր, որ խորհրդային կողմի առաջարկած սկզբունքների նկատմամբ ամերիկյան դիրքորոշումը պարզ կդառնա, եթե

⁸ Ֆերիդուն Ջեմալ Էրքինը սխալմամբ նշում է 1946 թ. օգոստոսի 8-ը (**Feridun Cemal Erkin**, նշվ. աշխ., էջ 414).

⁹ Մեջբերումը տե՛ս **Սահակյան Ռ. Գ.**, նշվ. աշխ., էջ 115:

¹⁰ **Feridun Cemal Erkin**, նշվ. աշխ., էջ 414-415:

¹¹ **Hurewitz J. C.** *Diplomacy in the Near and Middle East: A Documentary Record 1914 – 1956.* – Vol. II, Document, N 83 New York, 1972, p. 270.

համեմատվեն թուրքական կառավարությանն ուղղված՝ 1945 թ. նոյեմբերի 2-ի ամերիկյան և 1946 թ. օգոստոսի 7-ի խորհրդային հայտագրերը: Մասնավորապես, խորհրդային կողմի առաջարկած հինգ սկզբունքներից երեքի դեպքում ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի կառավարությունների կարծիքներն ընդհանուր առմամբ համապատասխանում էին: Սակայն 4-րդ և 5-րդ կետերի առնչությամբ առկա էին ակնհայտ տարաձայնություններ: Ամերիկյան կողմի հիմնավորումը հետևյալն էր. «խորհրդային հայտագրում առաջ քաշված 4-րդ առաջարկն ըստ էության ոչ այնքան 1945 թ. նոյեմբերի 2-ին թուրքական կառավարությանն ուղղված մեր (ամերիկյան - Գ. Ա.) հայտագրում առաջարկված Մոնտրոյի համաձայնագրի վերափոխման քննարկումներ սկսելու, որքան, ավելի շուտ, նոր կանոնակարգ հաստատելու միտում ունի, կանոնակարգ, որ սահմանված լիներ Թուրքիայի և սևծովյան մյուս տերությունների կողմից: Մեր կառավարությունն այն կարծիքին է, որ նեղուցների ռեժիմի հարցը գտնվում է ոչ միայն սևծովյան, այլ նաև այլ տերությունների, ներառյալ և Միացյալ Նահանգների մտահոգությունների շրջանակում: Հետևաբար, մեր կառավարությունը չի կարող համաձայնել Խորհրդային Միության այն տեսակետին, որ նեղուցների ռեժիմի հաստատումը պետք է անցնի սևծովյան տերությունների իրավասության տակ՝ բացառելով մյուս տերություններին»¹²:

Ամերիկյան կողմը չէր կարող համաձայնել նաև խորհրդային կառավարության հայտագրում առաջարկված 5-րդ սկզբունքին, ըստ որի, Թուրքիան և Խորհրդային Միությունը պետք է կազմակերպեն նեղուցների պաշտպանությանն ուղղված համատեղ միջոցառումներ: Ամերիկյան կողմը գտնում էր, որ «Թուրքիան պետք է շարունակի լինել նեղուցների պաշտպանության հիմնական պատասխանատուն», իսկ «ագրեսորի կողմից նեղուցների հարձակման ենթարկվելու կամ հարձակման սպառնալիքի տակ հայտնվելու դեպքում» ստեղծված իրավիճակը պետք է գնահատվեր իբրև «սպառնալիք միջազգային անվտանգությանը» և ենթակա լիներ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից ձեռնարկվելիք գործողություններին: Եվ, ընդհանրապես, ամերիկյան կողմը նկատում էր այն իրողությունը, որ խորհրդային փաստաթղթում ՄԱԿ-ի վերաբերյալ որևիցե հիշատակում բացակայում էր: Մինչդեռ, ամերիկյան կառավարության կարծիքով, նեղուցների ռեժիմը պետք է բերվեր «ՄԱԿ-ի հետ համապատասխան հարաբերության» և գործեր Միավորված ազգերի կազմակերպության սկզբունքներին ու նպատակներին լիովին համապատասխան և համատեղելի ձևով:

Վերոհիշյալի հետ մեկտեղ, Միացյալ Նահանգների կառավարությունը վերահաստատում էր իր պատրաստակամությունը՝ մասնակցելու ապագա կոնֆերանսին, որի նպատակը լիներ Մոնտրոյի համաձայնագրի վերանայումը¹³:

Ուշադրություն է գրավում այն, որ ամերիկյան կողմին խորհրդային ուղերձը, ոչ այլ ինչ էր, եթե ոչ Թուրքիային Խորհրդային Միության 1946 թ.

¹² Նույն տեղում, էջ 270-271:

¹³ Նույն տեղում, էջ 271:

օգոստոսի 7-ի հայտագրի բովանդակության մասին ամերիկյան կողմին իրազեկ պահելու պարտավորության կատարում: Ամերիկյան կողմի պատասխանը, իր հերթին, ոչ միայն պարզաբանում էր իր ակնհայտ բացասական դիրքորոշումը Խորհրդային Միության կողմից կարևորվող մի շարք սկզբունքների նկատմամբ, այլև նախորդում էր թուրքական կողմի առաջին պատասխան հայտագրին: Բավական է նշել, որ խորհրդային առաջին հայտագրին թուրքական կողմը պատասխանեց միայն 1946 թ. օգոստոսի 22-ին, երբ օգոստոսի 19-ին ամերիկյան կողմն արդեն իսկ արտահայտել էր իր դիրքորոշումը, որի մասին խոսել էր նաև թուրքական կողմի հետ: Հետևաբար, Թուրքիան կարող էր օհետ մղել օ խորհրդային կողմի բոլոր «հարձակումները»:

Խորհրդային հայտագրին թուրքական կառավարությունից ավելի շուտ պատասխանեց նաև Անգլիայի կառավարությունը: Անգլիական կողմի 1946 թ. օգոստոսի 21-ի հայտագրում ասվում էր, որ «նեղուցների ռեժիմը պետք է համապատասխանի Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին և սկզբունքներին»: Անգլիական կառավարությունը մերժում էր խորհրդային հայտագրի չորրորդ և հինգերորդ առաջարկները, պնդելով, թե «միջազգայնորեն վաղուց ընդունված է, որ նեղուցների ռեժիմում, բացի սևծովյան տերություններից, շահագրգռված են նաև մյուս երկրները», և որ Թուրքիան «իբրև շահեր ունեցող տարածաշրջանային տերություն պետք է շարունակի պատասխանատվություն կրել նեղուցների պաշտպանության և վերահսկողության համար»¹⁴:

Ամերիկյան և անգլիական կողմերի դիրքորոշմանը քաջատեղյակ թուրքական կառավարությունը խորհրդային հայտագրին պատասխանեց 1946 թ. օգոստոսի 22-ին: Թուրքական հայտագրում հերքվում էր այն պնդումը, թե առևտրական դրոշի տակ քողարկված, սակայն ռազմածանոթակ բնույթի նպատակներ հետապնդած նավերի՝ նեղուցներով անցման դեպքերը, որոնց մասին նշվում էր խորհրդային հայտագրում, վկայում են նեղուցների ռեժիմի անարդյունավետությունը: Թուրքիայի կառավարությունը հանգամանորեն շարադրում էր գերմանական և իտալական նավերի անցման մանրամասերը: Թուրքական կողմը հիշեցնում էր, որ դրանից հետո նմանատիպ դեպքերը կանխվել են: Դրա հետ մեկտեղ, հայտագրում պարզաբանվում էր, որ նեղուցներով անցած մի քանի նավեր հանդես էին եկել առևտրական նավատորմի դրոշի ներքո, չունեին սպառազինություն, չէին հիշատակվում ռազմածովային ամենամյա տեղեկատվական հանդեսում և դրանց մասին նշված չէր նաև Մոնտրոյի համաձայնագրի Հավելված 2-ում: Հայտագրում ընդունվում էր առևտրանավի անվան տակ իտալական «Տավրիզիո» լցանավի՝ նեղուցներով անցման անօրինականությունը, դա բացատրելով իտալական կառավարության հավաստիացումներով, որ իբր «Տավրիզիոն» դուրս էր թողնվել ռազմածանոթակ նավերի ցուցակից: Նեղուցներով վերջինիս անցման հաջորդ փորձը կանխվել է, ինչը 1941 թ. օգոստոսի 25-ին երախտագիտությամբ էր ընդունվել Թուրքիայում ԽՍՀՄ դեսպանի կողմից:

¹⁴ Архив внешней политики Российской Федерации (այսուհետև՝ АВП РФ) Черноморские проливы. Сборник документов 1917 – 1946. – М., 1947 с. 185.

Հայտագրում նաև նշվում էր, որ թուրքական կառավարությունը հաշվի էր առել անգլիական դեսպանատան այն տեղեկացումը, որ խորհրդային հայտագրում հիշատակված «Էմս» և «Կրիգստրանսպորտ» տիպի նավերը նախատեսված էին նավատորմին ծառայելու և գորքերի փոխադրման համար՝ ինչից էլնելով թուրքական ծովային իշխանություններն արգելել էին այդ կարգի նավերի անցումը նեղուցներով: Թուրքական հայտագրում ընդունվում էր «համաձայնագրի տեխնիկական կողմի» փոփոխման անհրաժեշտությունը՝ նավերի տեսակների որոշակիացման և տրանզիտի նկատմամբ վերահսկողության հաստատման տեսանկյունից: Ինչ վերաբերում է խորհրդային հայտագրում բարձրացված հարցի էությանը, ապա թուրքական կառավարությունը, որոշակի վերապահումներով, քննարկման համար հիմք էր ընդունում առաջին երեք կետերը, ընդգծելով, որ դրանք «կրկնում են համաձայնագիրը ներկայիս պայմաններին հարմարեցնելու վերաբերյալ 1945 թ. նոյեմբերի 2-ին ԱՄՆ-ի արած առաջարկները»: Սակայն 4-րդ և 5-րդ կետերը թուրքական կառավարության կողմից մերժվում էին ճիշտ նույն կերպ, ինչպես և ժամանակին մերժվել էին ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարությունների կողմից: Թուրքական հայտագրում ընդգծվում էին հետևյալ կետերը. ա) համաձայնագրի վերանայումը բացառում է նոր ռեժիմի մշակումը, որի ընդհանուր կառուցվածքը կտարբերվեր Մոնտրոյի ռեժիմից, բ) խորհրդային հայտագրում անտեսվում են կոնվենցիայի անդամ մյուս երկրների շահերը, գ) պետական և «ազգային տեսանկյունից համատեղ պաշտպանության վերաբերյալ խորհրդային առաջարկը համատեղելի չէ ոչ Թուրքիայի անքակտելի ինքնիշխան իրավունքների, ոչ էլ նրա անվտանգության հետ, որը չպետք է ենթարկվի որևիցե սահմանափակման... խորհրդային դրույթի ընդունումը կնշանակեր Թուրքիայի անվտանգության ոչնչացում»: Թուրքական կառավարությունը խորհրդային կողմին կոչ էր անում վերականգնել բարեկամական հարաբերությունները Թուրքիայի հետ, «ինչը Սև ծովում ԽՍՀՄ անվտանգության երաշխիք է»: Ինչ վերաբերում է Թուրքիայի անվտանգությանը, ապա հայտագրում նշվում էր, որ դրա երաշխիքն են ՄԱԿ-ի միջազգային ուժերը¹⁵:

Խորհրդային կողմի 1946 թ. օգոստոսի 7-ի հայտագրին թուրքական պատասխանը չէր կարող բավարարել ԽՍՀՄ կառավարությանը, քանի որ կարևորագույն հարցերում հստակորեն ձևավորվել էին տարաձայնություններ, որոնց շարքին էին դասվում նեղուցների համատեղ պաշտպանության ու դրանց կանոնակարգի վերաբերյալ ապագա կոնֆերանսի մասնակիցների որոշման հարցերը: Այդ հարցերում առկա էր ԱՄՆ-ի, Անգլիայի և Թուրքիայի կառավարությունների միակարծությունը, սակայն նրանք համաձայն էին նեղուցներով ռազմանավերի անցման կանոնակարգի փոփոխմանը՝ հոգուտ սևծովյան տերությունների: 1945 թ. նոյեմբերի 2-ի թուրքական կառավարությանը հղած հայտագրում ԱՄՆ-ի առաջարկությունների ընդունումը կարող էր ապահովել նեղուցներով սևծովյան երկրների ռազմանավերի ազատ անցում «բոլոր ժամանակներում», այլ կերպ ասած՝ նաև պատերազմական պայմաններում՝ ոչ

¹⁵ **Völi Ferenc A.**, *The Turkish Straits and NATO*, Stanford, 1972, p. 255-265.

սևծովյան երկրների համար հայտնի սահմանափակումների պահպանումով հանդերձ: Համաձայն այդ առաջարկների, մինչ հիշյալ հայտագրի հանձնումը ԱՄՆ-ը խորհրդակցել էր Անգլիայի հետ, որը հայտնել էր իր աջակցությունը: Դեռ Պոտսդամի կոնֆերանսի ժամանակ Ու. Չերչիլը նման դիրք գրավեց¹⁶: Սակայն խորհրդային ղեկավարությունը չփորձեց օգտվել այդ առաջարկից, այլ պնդեց իր ոչ իրատեսական հին դիրքորոշումը՝ կրկին ռազմական պահանջելով նեղուցներում:

1946 թ. սեպտեմբերի 24-ին, ինչպես նշվեց, խորհրդային կառավարությունը թուրքական կողմին դիմեց սևծովյան նեղուցների վերաբերյալ երկրորդ հայտագրով: Դրանում Թուրքիան կրկին մեղադրվում էր Մոնտրոյի համաձայնագրի խախտման, նեղուցներով թշնամական երկրների նավերի անցումը թույլատրելու մեջ, ինչպես նաև չէին ընդունվում թուրքական կառավարության՝ այդ հարցի հետ կապված բացատրությունները, որոնք «չեն վերացնում նրա պատասխանատվությունը կանոնակարգի խախտման համար»: Խորհրդային հայտագրում հերքվում էին այն բոլոր պնդումները, թե, իբր, նեղուցներով թշնամական երկրների նավերի անցումը սպառնալիքի տակ չէր դնում ԽՍՀՄ անվտանգությունը, որ Թուրքիան իրեն լիովին արդարացրել է նեղուցների պահապանի դերում, որ Թուրքիայի շնորհիվ «առանցքի» երկրներն իբր չեն հանդգնել խախտելու նեղուցների կանոնակարգը: Հայտագրում նշվում էր, որ երկրի անվտանգությանն ուղղված սպառնալիքի պայմաններում «խորհրդային Գերագույն գլխավոր հրամանատարությունը հարկադրված էր սևծովյան շրջանի պաշտպանության նպատակով ռազմական գործողությունների թատերաբեմի գլխավոր ուղղությունից հանել էական քանակության զինված ուժեր»: Ընդգծելով, որ Մոնտրոյի կանոնակարգը չի համապատասխանում սևծովյան տերությունների անվտանգության շահերին, խորհրդային ղեկավարությունը կրկին պնդում էր, որ նեղուցների նոր ռեժիմը պետք է հաստատել Թուրքիայի և հիշյալ երկրների կողմից: Ընդ որում, խորհրդային կառավարությունը հիմնվում էր 1921 թ. խորհրդա-թուրքական պայմանագրի վրա, ըստ որի, կողմերը համաձայն են Սև ծովի և նեղուցների միջազգային կարգավիճակի վերջնական մշակման գործը փոխանցելու մերձափնյա երկրների պատվիրակների հատուկ կոնֆերանսին: Խորհրդային կողմը նաև «հիշեցնում էր» 1921 թ. Թուրքիայի ու Անդրկովկասի հանրապետությունների և 1922 թ. Թուրքիայի ու Ուկրաինայի միջև կնքված պայմանագրերի մասին, որոնցում նույնպես տեղ էր գտել այդ նույն դրույթը:

Խորհրդային հայտագրում նաև նշվում էր Սև ծովի՝ իբրև փակ ծովի հատուկ դրությունը, ինչպես նաև Թուրքիայի, ԽՍՀՄ-ի և մյուս սևծովյան երկրների դիրքի առանձնահատկությունը: Ընդգծվում էր, որ սևծովյան ավեր դեպի երկրի կարևորագույն տնտեսական շրջաններ տանող յուրահատուկ մուտք է, ուստի

¹⁶ Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны 1941 – 1945 гг. Сборник документов, т. VI. Берлинская (Потсдамская) конференция руководителей трех союзных держав – СССР, Великобритании и США (17 июля – 2 августа 1945 г.), М., 1984, с. 151.

ԽՍՀՄ կենսական շահերից բխում է իր անվտանգությունը նեղուցների պաշտպանությանն անմիջականորեն մասնակցելու ճանապարհով ապահովելու ձգտումը: Ասվածից ելնելով՝ Խորհրդային Միությունը կրկին առաջ էր քաշում նեղուցների համատեղ պաշտպանության վերաբերյալ առաջարկը: ԽՍՀՄ-ի հետ նեղուցների համատեղ պաշտպանությունից Թուրքիայի հրաժարումը, նշվում էր հայտագրում, սևծովյան տերություններին զրկում տարածաշրջանում պատշաճ մակարդակի անվտանգություն ապահովելու ու երաշխավորելու հնարավորությունից: Իսկ այն, որ Թուրքիան միայնակ ի գորու չէր իրականացնելու հիշյալ խնդիրների լուծումը, ցույց էր տալիս հայտագրում նշված հետևյալ փաստը. «Վերջին պատերազմի ընթացքում «առանցքի» երկրներն օգտվել էին Սև ծովից՝ ԽՍՀՄ-ի դեմ իրենց ռազմական գործողությունների նպատակով»:

Մինչ կոնֆերանսի հրավիրումը Խորհրդային կառավարությունը նախապատվություն էր տալիս խնդրի ավելի ամբողջական քննարկմանը՝ կառավարությունների միջև անմիջական բանակցությունների ճանապարհով՝ հենվելով տվյալ հարցի վերաբերյալ Պոտսդամի կոնֆերանսում ընդունված որոշման վրա¹⁷:

Ամերիկյան և անգլիական կառավարություններն առաջինն էին, որ արձագանքեցին խորհրդային հայտագրին: 1946 թ. հոկտեմբերի 9-ի ամերիկյան հայտագրում ասվում էր, որ ԱՄՆ-ի կառավարությունը շարունակում է պաշտպանել այն նույն դրույթները, որոնք շարադրված էին 1946 թ. օգոստոսի 19-ին խորհրդային կառավարությանն ուղղված իր հայտագրում: Մասնավորապես, ամերիկյան կողմը գտնում էր, որ նեղուցների խնդիրը «վերաբերում է ոչ միայն սևծովյան տերություններին, այլև մյուս պետություններին, ներառյալ և ԱՄՆ-ին»: Բացի այդ, Միացյալ Նահանգների կարծիքով, «Թուրքիայի կառավարությունն այսուհետև ևս պետք է պատասխանատու լինի նեղուցների պաշտպանության համար, իսկ եթե նեղուցները դառնան հարձակման կամ ագրեսիայի սպառնալիքի օբյեկտ, այն պետք է ՄԱԿ-ի ԱԽ վարույթի տակ գտնվող գործ հանդիսանա»: Բացի այդ, ԱՄՆ-ը հայտարարում էր, որ կարծիքների փոխանակումը ենթադրվում էր Պոտսդամի գումարվելիք կոնֆերանսում՝ բոլոր շահագրգիռ կողմերի, այդ թվում և ԱՄՆ-ի մասնակցությամբ¹⁸: Այսպիսով, ԱՄՆ-ը ակնարկում էր, որ կարծիքների փոխանակումն ավարտվում է և ուժի մեջ է մնում նեղուցների ռեժիմի վերաբերյալ կոնֆերանսի հրավիրման մասին առաջարկը, մի հեռանկար, որին չէր ձգտում խորհրդային ղեկավարությունը:

Այդ նույն օրը հստակեցվեց նաև Մեծ Բրիտանիայի դիրքորոշումը նեղուցների հարցում: Մասնավորապես, Խորհրդային Միությունում Մեծ Բրիտանիայի դեսպան Ս. Պետերսոնի՝ ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարությանն ուղղված նամակում պարզաբանվում էր անգլիական կառավարության դիրքորոշումը՝ Թուրքիային հղված խորհրդային հայտագրի առթիվ: Ըստ այդ նամակի, Պոտսդամի պայմանավորվածությունների համաձայն

¹⁷ *Внешняя политика СССР, т. 6, М., 1962, с. 664-670.*

¹⁸ **Armaoğlu Fahir**, *Belgelerle Türk – Amerikan Mırasebetleri, Ankara, 1991, s. 150-151.*

նախատեսված «հաջորդ քայլը», այն է՝ երեք կառավարությունների և Թուրքիայի միջև կարծիքների փոխանակման փուլը, ավարտված է հայտագրերի փոխանակման ճանապարհով: «Իմ կառավարությունը,- գրում էր դեսպանը,- նպատակահարմար և անհրաժեշտ չի համարում հիշյալ խնդրի շուրջ ուղղակի նամակագրության շարունակումը... Իմ կառավարությունը, նախկինի պես պատրաստ է մասնակցել կոնֆերանսին»¹⁹:

Իր հերթին, թուրքական կառավարությունը խորհրդային հայտագրին պատասխանեց հոկտեմբերի 18-ին: Թուրքիան հերքում էր Մոնտրոյի համաձայնագրի խախտման և նեղուցներով «թշնամական նավերի» անցման վերաբերյալ խորհրդային կողմի մեղադրանքները: Ինչ վերաբերում է դեպի սևծովյան շրջան խորհրդային զինված ուժերի զգալի հատվածի փոխադրման պատճառներին, ապա թուրքական կառավարությունը դաշնակիցների նման դա բացատրում էր նրանով, որ ծովափի մեծագույն մասը բռնազավթված էր ռումինական ու բուլղարական նավատորմները զավթած գերմանացիների կողմից, ինչի հետևանքով 1942 թ. գարնանից ի հայտ էր եկել ծովափի երկայնքով գերմանական հարձակմանը դիմագրավելու անհրաժեշտություն: Թուրքիան կրկին ընդունում էր «սևծովյան տերություններին... արդարացիորեն բավարարելու նպատակով» Մոնտրոյի համաձայնագիրը փոփոխելու, մասնավորապես նեղուցներով անցման և դրանց վերահսկողության պայմանները, ինչպես նաև համաձայնագրի Հավելված 2-ը վերանայելու անհրաժեշտությունը: Առաջարկվում էր համաձայնագիրը կապել նաև ՄԱԿ-ի հետ, բացառել դրան Ճապոնիայի մասնակցությունը և ներգրավել ԱՄՆ-ին: Թուրքիան դաշնակիցների նման չէր համաձայնում ապագայում հնարավոր կոնֆերանսի մասնակիցների կազմի և նեղուցների համատեղ պաշտպանության վերաբերյալ խորհրդային առաջարկներին: Հայտագրում ընդգծվում էր, որ Թուրքիան ոչ միայն սևծովյան, այլև միջերկրածովյան տերություն է, ուստի ապագա կոնֆերանսի մասնակիցների կազմը չի կարող սահմանափակվել սևծովյան երկրներով, իսկ նեղուցների համատեղ պաշտպանությանը Թուրքիայի համաձայնությունը կնշանակեր ոչ այլ ինչ, եթե ոչ սեփական ինքնիշխանության կիսում օտարերկրյա տերության հետ:

Թուրքական կառավարության կարծիքով, նախապատրաստական աշխատանքները, որոնց ձգտում էր Պոստամի կոնֆերանսը, նախ՝ ԱՄՆ-ի ու Մեծ Բրիտանիայի կողմից Անկարային արված հաղորդումների և ապա՝ Թուրքիայի ու Խորհրդային Միության միջև կարծիքների փոխանակման շնորհիվ ներկա պահին ավարտվելուն մոտ են: Թուրքական կառավարությունը հայտարարում էր Մոնտրոյի համաձայնագիրը վերանայելու նպատակով, նախորդը ստորագրած բոլոր երկրների (բացառությամբ Ճապոնիայի) և ԱՄՆ-ի մասնակցությամբ նոր կոնֆերանս անցկացնելու հարցում իր պատրաստականության մասին²⁰:

¹⁹ *АВП РФ, Черноморские проливы, с. 218.*

²⁰ **Váli Ferenc A.**, *The Turkish Straits and NATO, Stanford, 1972, p. 278-297.*

Խորհրդային կառավարությունը շարունակում էր պնդել իր տեսակետը: Մեծ Բրիտանիայի դեսպանի հոկտեմբերի 9-ի նամակի կապակցությամբ 1946 թ. հոկտեմբերի 26-ի պատասխան նամակում ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարությունը նշում էր, որ խորհրդային կառավարությունը համաձայն չէ այն տեսակետին, թե Պոտսդամի կոնֆերանսի որոշմամբ երեք կառավարություններից յուրաքանչյուրի և Թուրքիայի միջև նախատեսված բանակցությունները հարկավոր է ավարտված համարել: Այդ իսկ պատճառով, պնդում էր խորհրդային կողմը, դեռ վաղ է քննարկել նեղուցների նոր կանոնակարգի հաստատման նպատակով կոնֆերանսի հրավիրման հարցը²¹: Թուրքիայում խորհրդային դեսպան Ս. Վինոգրադովն իր հերթին ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարությանը 1946 թ. դեկտեմբերի 10-ին ուղղած գրության մեջ նշում էր. «Ներկայումս նման կարգի կոնֆերանսի հրավիրումը մեզ թվում է ոչ շահավետ... Հաշվի առնելով կոնֆերանսի մասնակիցների կազմը, մեր երկիրը կհայտնվի փոքրամասնության մեջ, և այդ կոնֆերանսում մենք չենք հասնի նեղուցների և Սև ծովի անվտանգության երաշխիքների վերաբերյալ հիմնական հարցի լուծմանը»: Մոսկվայի հավակնությունները պահպանելու անհրաժեշտությունից ելնելով՝ Ս. Վինոգրադովը պարզաբանում էր, որ նման կարգի կոնֆերանսի միջոցով նեղուցների կանոնակարգի փոփոխությունը «կբարդացներ հետագայում» խորհրդային առաջարկների 4-րդ և 5-րդ կետերի իրագործումը, կետեր, որոնք շարադրված էին 1946 թ. օգոստոսի 7-ին Թուրքիային հղված խորհրդային հայտագրում: Դեսպանը գտնում էր, որ կոնֆերանսը կունենար ոչ թե նեղուցների նոր կանոնակարգի հաստատման, այլ գոյություն ունեցողում որոշակի փոփոխություններ մտցնելու նպատակ: Թուրքիայի նկատմամբ ճնշում գործադրելու նպատակով Ս. Վինոգրադովը խորհուրդ էր տալիս չեղյալ հայտարարել 1921 թ. խորհրդա-թուրքական պայմանագիրը՝ դա հիմնավորելով նրանով, որ նեղուցների կանոնակարգի սահմանման հարցում իր մոտեցման մեջ թուրքական կառավարությունը հենվում է ոչ թե այդ պայմանագրի, այլ Մոնտրյոյի համաձայնագրով սահմանված կանոնակարգի վրա²²:

Ս. Վինոգրադովի գրությունը լիովին արտացոլում է տվյալ ժամանակահատվածում խորհրդային դիվանագիտության մտավախությունները: ԽՍՀՄ-ը շահագրգռված չէր նոր կոնֆերանսի հրավիրմամբ: Պատահական չէ, որ հայտագրերի փոխանակումների դադարեցումից հետո կողմերը թողեցին նեղուցների հարցով նոր կոնֆերանս հրավիրելու վերաբերյալ գաղափարը: 1938 թ. համաձայնագրին Իտալիայի միանալուց հետո Մոնտրյոյի համաձայնագրում տեղ գտած միակ փոփոխությունը, 1951 թ. Սան-Ֆրանցիսկոյի հաշտության պայմանագրի համաձայն, վերջինից Ճապոնիայի դուրս գալն էր:

²¹ *АВП РФ, Черноморские проливы, с. 247.*

²² Նույն տեղում, ֆ. 0132, ց. 29 ա., թղթ. 286, գ. 1. թ. 30-32, գ. 31 գ. 368, թ. 67-68 :

ПРОБЛЕМА ЧЕРНОМОРСКИХ ПРОЛИВОВ В НАЧАЛЕ ХОЛОДНОЙ ВОЙНЫ

ГАСПАРЯН А. С.

Резюме

Учитывая случаи многочисленных нарушений конвенции Монте-со стороны Турции во время второй мировой войны, Советский Союз обратился к Турции с двумя нотами относительно режима черноморских проливов. В них было сформулировано отношение Советского Союза к пересмотру режима и разработке новой системы безопасности черноморского бассейна.

Однако усилия Советского Союза не увенчались успехом, ибо правительства Соединенных Штатов и Великобритании были заинтересованы в том, чтобы оставить проливы под протекторатом Турции.